

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԹՅԱՆ ՆՈՆԱ ՌԱՖԻԿԻ

ՊԵՏՐՈՍ ՀԱՃՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

Ժ. 01.02- «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

բանասիրության գիտությունների թեկնածու
ՔՆԱՐԻԿ ԱՐՄԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 30-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտում գործող Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ, 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. փետրվարի 28-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,
բանասիրական
գիտությունների թեկնածու

Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Սիրիայում հասակ նետած և Բուենոս Այրեսում լայն գործունեություն ծավալած արձակագիր, խմբագիր, հրապարակագիր և մանկավարժ Պետրոս Հաճյանի գեղարվեստական ժառանգությանը: Առանձին զուխներում փորձել ենք ամփոփել գրողի կյանքի ու ստեղծագործության հանգրվանները՝ երևան հանելով գեղարվեստական արձակի ընդգրկած նյութի մեկնության առանձնահատկությունները՝ սփյուռքահայ գրականության նորագույն շրջանի գրական դիմագծերի հարուստ խորքի վրա: Ձգտել ենք ցույց տալ այն աղետները, որոնք մի կողմից հեղինակին կապում են սփյուռքահայ գրականության նախորդ շրջանի, հատկապես Կարոտի երգիչների վաստակին (Համաստեղ, Վ. Հայկ, Ա. Հայկազ, Բ. Նուրիկյան, Հ. Մնձուրի և ուրիշներ), որոնց հետաքրքրությունները բացել են մեզանում գեղարվեստական տարեգրության հայտնի հատկանիշները, մյուս կողմից՝ երևան հանել այն յուրահատկությունները, որոնք Պետրոս Հաճյանին նկատելիորեն «հեռացնում են», առանձնացնում նախորդների գրականության առաջադրություններից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան 20-րդ դարի երկրորդ կեսից գրական ասպարեզ իջած Պետրոս Հաճյանի գեղարվեստական ժառանգությունն է, մասնավորաբար «Հրամմեցե՛ք, պարոններ» (1995), «Կար ու չկար» (2003) պատմվածաշարերը և «Կարկեմիշ» վիպակը (2005): Մեր նպատակն է սփյուռքահայ գրական շարժումների, հատկապես Կարոտի գրական հանգույցներում ներկայացնել նրա արձակի առանձնահատկությունները, ցույց տալ տարեգրության սկզբունքների մշակման մեջ նրա խաղացած դերը: Մեր առջև խնդիր ենք դրել.

ա) ամբողջացնել Պ. Հաճյանի կյանքի հանգրվանները և ստեղծագործության բնութագիրը՝ գրական համահայկական շարժման համապատկերում,

բ) ցույց տալ հեղինակի տեղն անցյալ դարավերջի ու այս դարասկզբի Սփյուռքի գրական բազմաշերտ ճանապարհներին,

գ) վերհանել նրա պատմվածքների և վիպական նյութը կառուցելու եղանակը և ժանրային հատկանիշները, Ճարապուսի, Հարավային

Ամերիկայի միջավայրերի համապատկերի հիմնագծերը, հայ հերոսների ազգային տիպաբանության և կերպարակերտման քննական առանձնահատկությունները,

դ) բացահայտել հեղինակի երկերում ի մի բերված ինքնակենսագրական ժանրի ու գեղարվեստական տարեգրության աղբյուրները՝ համադրելով սփյուռքահայ գրականության մեջ եղած շրջափուլերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նախևառաջ նրանով, որ առայսօր Պ. Հաճյանի կյանքի ու ստեղծագործության շուրջ ուսումնասիրական բնույթի ամբողջական աշխատանք չի կատարվել, համակարգված վերլուծումի չեն ենթարկվել նրա արձակ էջերը, գրականագիտական մեկնական դատումներն ու հայության կենսակերպի փոփոխական ընթացքների քննությունը, նրա հայապահպան մտահոգությունների առօրյա որոնումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Շարադրանքի մեջ հետապնդել ենք գրողի ամբողջական հայացքի մատուցման նպատակադրությունը, ուր կենսական նշանակություն են ձեռք բերել գրապատմական համադրական և ճանաչողական բնութագրերը (կենսապատում, միջավայրի և հերոսի տիպականացման և ոճավորման համակարգված քննական փորձ, գրողի ստեղծագործական ժառանգության տարաբնույթ շերտերի համամասն մեկնություն): Այստեղ մենք երևան ենք հանել տարեգրության և ինքնակենսագրական տարրերի գեղարվեստական մատուցման գրողի կիրառած հմուտ եղանակը: Պ. Հաճյանի առանձին ժողովածուների քննությամբ ցույց ենք տվել համեմատական վերլուծության ազգային-պատմական ընդհանրական նախահիմքերը՝ ճանաչողական տարբեր մեթոդների կիրառման արդյունավորությունը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Պետրոս Հաճյան արձակագրի և հրապարակագրի մասին առանձին գնահատություններով հանդես են եկել պոլսահայ արձակագիր, «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռուպեր Հատտեճյանը, հայրենի արձակագիր, գրականագետ Նորայր Աղայանը, հայրենի գրականագետ Սուրեն Դանիելյանը: Վերջինս երևանում «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ջանքերով հրատարակել է Պետրոս Հաճյանի «Ճանապարհի դէպի Կարկեմիշ»

ժողովածուն, որն ընդգրկում էր «Հրամմեցէ՛ք, պարոններ» պատմվածքների շարքը և համանուն վիպակը (Երեւան, «Զանգակ-97», 2008):

Սասնավորապես Պ. Հաճյանի ստեղծագործական էջերին անդրադարձել է նաև հալեպահայ գրաքննադատ Լևոն Շառոյանը իր «Պուէնոս Այրէս, Արմենիա փողոց» / Նոթեր եւ նիշեր Հարավային Ամերիկայէն (Լոս Անճելըս, 2014) գրքի մեջ: Պ. Հաճյանի մասին արտահայտվել են լիբանանահայ մշակութային-կրթական գործիչ Հակոբ Լատոյանը ամերիկահայ գրագետ Հակոբ Կյուլլյունյանը և, իհարկե, շատ ուրիշներ:

Վերոնշյալ աղբյուրների և անունների հիշատակումն արդեն ցույց է տալիս թեմայի մշակվածության ոչ բավարար լինելը, ուստի կարելի է ասել, որ ատենախոսությունն առաջին փորձն է համահավաք ներկայացնելու արձակագրի գրական ժառանգությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կատարվել է Արցախի պետական համալսարանում: Քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԱրՊՀ Գրականության և լրագրության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են երիտասարդ գիտնականների համաժողովներում (Արցախի պետական համալսարան) զեկուցումների ձևով: Գիտական հանդեսներում ունի 7 հրատարակություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից երկրորդը և երրորդը ունեն երկուական ենթագլուխ: Այն ավարտվում է եզրակացություններով, օգտագործված գրականության ցանկով և ծավալվում է 126 համակարգչային էջի վրա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրված է աշխատանքի ընդհանուր բնութագիրը, մշակվածությունը: Հիմնավորված է թեմայի արդիականությունը, շարադրված է աշխատանքի մեթոդաբանությունը, մանրամասնված է ատենախոսության կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԳՐՈՂԻ, ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԽՄԲԱԳՐԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

Այստեղ փորձել ենք գրողին տեսնել տարբեր միջավայրերում՝ նախ, Ճարապլուս և Հալեպ, ապա Արգենտինա՝ Բուենոս Այրես: Անդրադարձ է կատարվել նրա հասարակական, քաղաքական, խմբագրական, ինչպես նաև մանկավարժական գործունեությանը: Այս գլխում, հաշվի առնելով հայրենի և Սփյուռքի գրականագիտական փորձը, ցույց ենք տվել Պ. Հաճյանի դերը Կարոտի շարժման ծիրում: Փորձել ենք տալ գրողի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

Հեղինակի կենսագրության մեջ և ստեղծագործական աշխատանքում մասնավորաբար ընդգծել ենք ծննդավայրի գործոնը:

Պետրոս Հաճյանը ծնվել է 1933 թվականին Ճարապլուսում, որը միջնադարից մնացած «...հիթիթներու հազարամեայ եւ խեղճացած Կարկենիշ»¹ է, քաղաքակրթությունների երբեմնի նշանավոր խաչմերուկը: Մանուկ Պետրոսը Սրճեփ Ավտիսի և հռոմկլայեցի Ազնիվ Գույումճյանի՝ արդեն բազմամտամ հարկի տակ «չորս աղջիկներուն յաջորդող մանչն էր»:

Հետաքրքիր է այս առումով Պ. Հաճյանի դիտարկումն իր սերնդի հոգեբանության հետ կապված, ինչը, այնուհանդերձ, վերջիվերջո, գնում-կապվում է նախնիների ճակատագրին: Արձակագիրը խոստովանում է. «Որք չէինք, բայց որբութիւն մը կար մեր օրերու պատմութեան մէջ...: Բացակայ Հայրենիքի ճնշիչ մեղեդին էր այդ տրտմութիւնը»²:

Գրական գործունեությունը հեղինակը սկսել է դեռևս հիսունական թթ.՝ աշխատակցելով Հալեպի «Կանթեղ» պարբերականին, որն իր շուրջն էր համախմբել երիտասարդ գրողներին: Նրանց մեջ ակնհայտորեն առանձնանում էր Պետրոս Հաճյանը՝ գրական կայունացող ձեռագրով, պատկերային թարմ մտածողությամբ, ազգային հիշողության քնարական ընդգրկումով:

Հետագայում, ճիշտ է, Պ. Հաճյանը աշխատակցեց Հալեպի «Արեւելք»-ին, Փարիզի «Յառաջ»-ին և շատ ավելի ուշ «Նոր Յառաջ»-ին, Բեյրութի «Բագին»-ին, Բուենոս Այրեսի «Արմենիա»-ին, Աթենքի «Ազատ օր»-ին, խմբագրեց արգենտինյան մամուլի գրամշակության հատկանշական թերթեր («Արմենիա», «Շարժում», «Սարտարապատ»), բայց և գեղարվեստական խոսքի տարածք մտավ անհամեմատ ուշ (մինչ այդ նա ճանաչված էր «տեղական նշանակության» մանկավարժական դասագրքերով («Պարզ քերականութիւն», «Սոնիա՛, հայերէն գիտե՛ս», «Պզտի՛կ լեզու, զուա՛րթ լեզո») ³ , հրապարակագրական և պատմական ուղղվածությամբ

¹ «Սարտարապատ» / գրական-ընկերային օրաթերթ, Պուենոս Այրես, 2012, Հոկտ. 17:

² Հաճեան Պ., Հարաւը Սփիւռքի մէջ, Հալեպ, «Կիլիկիա» հրատ., 2008, էջ 510:

³ Հարկ է այստեղ ընդգծել կրթական ասպարեզում իր երկարատև ծառայությունը, նախ, իբրև ուսուցիչ և տնօրեն Հալեպի Քարեն Եփփե վարժարանում, ապա՝ նույն

ակնարկաշարերով և ուսումնասիրություններով («Հայ մտքի մշակներ», երկու հատոր, 1987, 1990, «Հարիւր տարի, հարիւր պատմութիւն», 2003), քաղաքական հակվածությամբ բանախոսություններով («Հարաւը Սփիւռքի մէջ», 2008):

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏՐՈՍ ՀԱՃՅԱՆԻ ՓՈՔԻ ԱՐՁԱԿ

Երկրորդ զլովար շարադրել ենք երկու ենթազլովաներով՝ «Հրամանեցէ՛ք, պարոններ» պատմվածաշարը՝ իբրև գեղարվեստական տարեգրության նախափորձ՝ և «Գեղարվեստական որոնումների նոր սահմաններ. «Կար ու չկար»:

Առաջինում շեշտադրել ենք այն հանգամանքը, որ փոքր ծավալի ստեղծագործություններում հեղինակը փոքր վրձնահարվածներով ամբողջացրել է իր նախասիրած նյութը՝ ծննդավայրի խճանկարը: Ոճային ինքնահատուկ մոտեցումներով կերտել է հայրենիք կորցրած և ճարապլուսում հաստատված խլկաների ներաշխարհի ապրումների անսովոր խիտ գույները՝ առօրյայից հնտորեն անցում կատարելով դեպի հոգեբանական քննության տիրույթներ:

Պ. Հաճյանի ճարապլուսի վավերական հերոսները՝ Արշալուս Քուրուկ, կոշկակար Ստեփան, Սրճեփ Արուշ Տայի, Սրճեփ Ավտիս (իր հայրն է), Պարտիզպան Օհաննես, մանրավաճառ Փոլ և այլք, վերցված են գյուղական հարազատ միջավայրից, որը շարունակում է անցյալի կեցության հիշատակները. շատ բան չի փոխվել նրանց կյանքում. թերևս միայն գումարվել են ծնողական հիշատակների՝ իրենց այրող դրվագները:

Պ. Հաճյանն առաջիններից էր, ով կարոտի հարցադրումների կողքին շրջափեց ներգաղթի թեման այլ պատուհանից՝ վերհանելով նաև թերությունները, օրինակ, այն, որ «կոմիտեճի» կոչված տղաները շորթեցին ներգաղթողի վերջին շապիկն անգամ: Համաձայնենք գրականագետ Ս. Դանիելյանի այն տեսակետի հետ, որ Պ. Հաճյանի ստեղծագործությունների «նիւթը դառնում է ոչ թէ ներգաղթը կամ եղենի յիշողութեան արծարծումը, այլ առաջին հերթին հոգեբանական այն խոր տեղաշարժերը, որոնք ապրում է հայ մարդը աշխարհաճանաչողութեան աճուններում»⁴:

Ի՞նչ տվեց ներգաղթը հույսով ու ակնկալիքներով սպասող եղեսիացուն, դիարբեթիրցուն, նիզիպցուն, մշեցուն, բացի այն բանից, ինչպես նկատում է գրողը, որ խախտվել է օտարոտի «օրինաչափութիւն մը, կենցաղային եղանակ

հանգամանքով գործունեությունն արդեն Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ հիմնական և երկրորդական վարժարանում:

⁴ Հաճեան Պ., Ճանապարհ դէպի Կարկեմիշ, Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 11:

մը»⁵: Եվ «...զարմանալի ու խորհրդաւոր փյուզում մը բերաւ անոնց առօրեայ կենցաղին մէջ. հիւանդին տրուած սխալ դեղ մը եղաւ կարծես, որ երեսան բերաւ նոր վերքեր կամ բորբոքեց հիւները»⁶, Ավելին՝ «**Ներգաղթը հարսնիքի պէս սկսած էր հոն եւ յուղարկաւորութեան պէս վերջացած...** (ընդգծումը մերն է-Ն.Դ)», - սրոյթամբ ու առանց երկմտանքի հայտարարում է գրողը:

Պ. Հաճյանի պատմվածքներում սյուժետային առանձին բովանդակություն է կազմում հայ-արաբ հարաբերությունների քննությունը: Նրա հերոսների մեջ յուրահատուկ մաս են կազմում արաբական միջավայրում իրենց ինքնությունը կորցրած, բայց նաև հենց այդ հյուրընկալ միջավայրում փրկություն գտած անհատներ («Ճակատագիր», «Վերադարձ», «Ճանապարհ», «Առեղծուած» և ուրիշներ):

Պ. Հաճյանը նկատում է և տագնապով արձանագրում, որ Սփյուռքի պայմաններում ազգային դիմագծի ու մշակույթի շարունակականությունը դժվարությամբ է ճանապարհ հարթում: Ահա թե ինչու գրական, ընկերային և ուսուցչական գործունեությունը համարում էր ժողովրդի արևմտյան հատվածի համար փրկության յուրովի ճանապարհ:

Երկրորդում («Գեղարվեստական որոնումների նոր սահմաններ. «Կար ու չկար») ի մի ենք բերել գրող-մանկավարժի քննության դաշտը ներկայացնող փոքրածավալ գործերը՝ գեղարվեստական ընդգրկումներով, ուր երևան է գալիս աշակերտության հուզաշխարհը՝ Հալեպի Քարեն Եփփեից մինչև Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարան ձգվող ճանապարհներով, Սփյուռքի կրթաշխարհի անակնկալ անկյուններով: Դրան գումարենք ուսուցիչների ազգային-բարոյաբանական մտահոգությունները, ներանձնական հարուստ, բայց դրսի աչքին գլխավորապես անտես զգացումները, որոնք զուգակցվում են իբրև պատմվածքների սյուժետային ատաղծ:

Հեղինակը պատումը հյուսում է այնպես, «Ինչպէս որ հէքեաթները կը սկսին «Կար ու չկար» ինքնիրմով հակասական եւ ինքզինք տեսաբար չէզոքացնող հրաշալի խօսքով...»⁷: Հեղինակը սկսում է քնարական ոճավորումով և ճիշտ հեքիաթի սահուն ընթացքի պես անցնում հայ աշակերտուհի Քնարիկի և արաբ երիտասարդի սիրո խռովիչ պատմության մատուցմանը՝ նյութը հմտորեն շրջելով դեպի գեղարվեստական պատումի «դարպասներ»:

Պ. Հաճյանի նախասիրած այս էջերը դասական նշանակությամբ «հեքիաթ» կոչելը դժվար է, որովհետև նրանք չունեն ժանրին հատուկ դասական կառուցք, հերոսների ընտրության այլաբանական սկզբունքը,

⁵ Նույն տեղում, էջ 53:

⁶ Նույն տեղում, էջ 52:

⁷ Հաճյան Պ., Կար ու չկար / պատմվածքներ, Պուլնոս Այրէս, տպ. «Ազեան», 2003, էջ 40:

իրականությունից ազատ խզումի հնարավորությունը: Ի դեպ, դեռ իրենից առաջ սփյուռքահայ արձակ իրենց գործերի մի մասին «հեքիաթ» անունն են տվել Հակոբ Օշականը և ֆրանսահայ միջավայրից Շավարշ Նարդունին:

Ազգային նկարագիր ձևավորելու գործը Սփյուռքում, համոզված է Պ. Հաճյանը, շարունակում է մնալ միայն ազգային դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիների ուսերին: Այստեղից հեղինակը կտրուկ անցում է կատարում նրանց գեղարվեստական նկարագրի ամբողջացման խնդրին, այն, ինչ գիտակցում էր, պիտի դառնար իր այս ժողովածուի կենսական կարևոր հարցադրումը («Ես հայ չեմ, պարո՛ն», «Անկատար առեանձում»):

Ժանրային կառուցողական տեսանկյունից Պ. Հաճյանի մոտ սահմանակից են պատմվածքը և ակնարկը, այսինքն՝ գեղարվեստական պատումի մեջ վավերական տարրերը հաճախ զգալի տիրապետություն են ստանում: Բայց դրանից չի կարելի հետևություն անել, թե մենք գործ ունենք ժանրանցումի հետ, թե պատմվածքը իր տեղը ամբողջապես զիջել է ակնարկին: Դրա «վտանգավորությունն» այն է, որ արձակագիրը կանգնում է գեղարվեստական սահմաններից դուրս դիտվելու մտայնության դեմ: Նկատենք, որ նման վերաբերմունքի պատճառով դեմ-դիմաց, սուր անկյան տակ, ակամա հայտնվում են Հաճյան-վավերագիրը և Հաճյան-պատմվածագիրը: Սակայն, ճշմարտության նժարը թեքվում է դեպի վերջինիս արժևորման փաստարկումի կողմը:

Ժանրային առումով նորավեպերին սահմանակցվող այս կարգի պատմվածքներում («Ձագարի ժառանգութիւնը», «Ապտակի մը հրաշքը», «Վաղեմի ֆետային», «Եկեղեցւոյ պնակին առջե» և այլն) նկարագրվող միջավայրը, բնականաբար, փոփոխական է. այն մերթ Հալեպի արևելյան հորձանուտն է, մերթ էլ՝ Բուենոս Այրեսի սառնաշունչ հարավը, որոնց մատուցման մեջ բևեռային հոգեբանական ընդգրկումները գրողը քննում է արտաքննապես խաղաղ ոճավորումով, իրականում՝ անտես հուզականությամբ:

Տարբեր են այս երկերում ժամանակի և մարդու, հայի և օտարի, արտագաղթածների և տեղաբնակների բազմաձայլ հարաբերությունները, որոնք ձգվում են հիսունականներից մինչև իննսունականներ, մինչև դարասկիզբ:

Հաստատելով իր նվիրվածությունն Արևելքի գունազեղությանն ու նրան մաս կազմող հայ գրական աշխարհի հեքիաթային պերճանքի՝ «կար ու չկարի» շարունակական թելադրանքին՝ Պ. Հաճյանը եզրակացնում է, որ ինքն այժմ կանգնած է ազգային արմատները պաշտպանող գրական ուժի դիրքերում, որից այն կողմ գեղարվեստական տարեգրությունն է: Դա այլաբանորեն Կարկեմիշի հիմնարար ուղին է, որն ավելին է, քան աշխարհագրական անվանումը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Այս գլուխը նույնպես կազմված է երկու ենթագլուխներից՝ «Պետրոս Հաճյանը և տարեգրության ինքնակենսագրական ժանրը գրապատմական զուգահեռներում» և «Ծննդավայրի գերիվեր գործոնը «Կարկենիշ» վիպակում»:

Առաջին ենթագլխում փորձել ենք հիմնավորել, որ Պ. Հաճյանի գրականությունը խորը աղերսների մեջ է նախորդների՝ Համաստեղի, Հ. Մնձուրու, Վ. Շուշանյանի, Վ. Հայկի, Բ. Նուրիկյանի, Հ. Ասատուրյանի, Մ. Իշխանի, Ա. Ծառուկյանի և ուրիշների՝ ժանրի համաձիգում եղած երկերի հետ: Ի մասնավորի ձգտել ենք երևան բերել նրա զարգացման կորագիծը՝ վերոնշյալ գրողների օրինակով, և վերհանել Ճարապլուսի հայաշունչ համայնապատկերը ստեղծագործական համաբնագրում՝ պատմվածքների շարքեր և խոհագրական առանձին դրվագներ:

Ինքնակենսագրական և հուշագրական աղերսները ներկայացնում են ժողովրդի հավաքական կյանքը: Կերպարների մեջ հաճախ կարելի է որսալ հեղինակի մտերմիկ միջավայրը: Այս առումով գեղարվեստական տարեգրությունը մեկ ընդհանուր հորձանքում համախմբում է կերպարները գրական-աշխարհագրական միջօրեականներում՝ ստեղծելով հաճախ երևութական ամբողջության տպավորություն, հավաստի, ճշմարիտ պատմությունների զգացական ու սրտաբուխ աշխարհ: Գուցե դա ինչ-որ տեղ փոխարինում է գործողությունների և վերլուծումների մեջ օբյեկտիվության, գրողական չեզոք հայացքին, սակայն ամեն դեպքում չպիտի մոռանանք, որ գեղարվեստական տարեգրությունը հետամուտ է ժողովրդական մտածողության ու իմաստության որոնման անմիջական պատումին՝ իբրև ճճավորում:

Ռուս տեսաբան Յու. Սապոժնիկովան գրում է ինքնակենսագրական ժանրի տեսաբանական խորհրդային շրջանի հայտնի վեճերի մասին, երբ «...բացահայտելով երկերի հիմնական հատկանիշները՝ նրանք (տեսաբանները-Ն.Դ.) բոլոր դեպքերում գալիս են մեկ հետևության. այն (ինքնակենսագրական ժանրը-Ն.Դ.) պատկանում է հուշի գրականությանը»⁸, ինչը շատ է բնութագրում սփյուռքահայ արձակի տիպաբանական ճանապարհը, այդ համաբնագրում նաև՝ Պ. Հաճյանի գրականությունը:

⁸ Сапожникова Ю. Л., Жанр автобиографии: понятие и особенности. www.cyberleninka.ru:

Ինքնակենսագրական պատումում կենտրոնական ելագիծ է գալիս նախ հեղինակը, իսկ «նյութը» նույն այդ ժամանակ ծավալվելով՝ «վերաճում է մի գերդաստանի, ապա՝ ժողովրդի կյանքի պատմության»⁹: «Դա էպոխայի պատմությունն է, թափառական ու անտերունչ մի սերնդի կյանքի տարեգիրքը»¹⁰, - դիպուկ ու ճշմարտացի ընդհանրացնում է Սևակ Արզումանյանը:

Իսկ ահա Ս. Դանիելյանը, ժանրային կառույցի մեջ առանձնացնելով հեղինակի դերակատարությունը միջավայրի հերոսների հետ հարաբերակցության մեջ, եզրահանգում է. «Ինքնակենսագրական վեպի հերոս առաջադրուած հեղինակը իր մտորումներով, մեկնական գնահատութեան կարելիութեամբ ներագրում է գեղարուեստական միջավայրի վրայ որոշակիօրէն՝ անհամեմատ բարձրանալով շրջապատի միա հերոսներից»¹¹: Հիրավի, դա սփյուռքահայ գրականության կառուցվածքային յուրահատկություններից մեկն է, որը հաստատում են Սփյուռքում թե հայրենիքում, երբ դիմում են Ե. Օտյանին («Անիծյալ տարիներ»), Վ. Թոթովենցին («Կյանքը հին հողմեական ճանապարհի վրա»), Գ. Մահարու կենսապատումներին և այլոց:

Գեղարվեստական տարեգրության բացառիկ օրինակներ են Համաստեղի փոքր արձակ պատումների՝ «Գիւղը» (1924) և «Անձրեւ» (1929) ժողովածուները, որոնցում փոքր տարածության մեջ հեղինակը բացում է ապրած, կորսված միջավայրը, անհունի մեջ թաղված դեմքեր ու հիշատակներ: Համաստեղից Պ. Հաճյանը «վերցնում է» գյուղաշխարհի աշխատանքային համայնապատկերը. ահա կարկենիշցի պարտիզպան Օհաննեսը, ում կյանքը ներդաշնակ է միայն հողի ու աշխատանքի հետ, ինչպես Համաստեղի Տափան Մարգարի ու մյուս աշխատասեր հերոսների պարագայում: Նրա համար նույնպես կարևորվում է աշխատանքի բարոյաբանության գիտակցությունը, թե՛ «Մենք կը հաւատանք, որ հայ ժողովուրդը ինչ պայմաններու մէջ ալ ըլլայ, պիտի կրնայ պահել իր նկարագիրը, որ ինքնին ցեղային առողջութիւն է: Այդ առողջութիւնն է, որ մեզի ժառանգ ձգեցին 1915-ի Եղեռնի մէկ միլիոն զոհերը»¹²: Եվ կարևոր չէ՝ որտեղ. «Պուէնոս Այրէսի մէջ» թե՛ «որեւէ մեծ քաղաքի մարդակուլ պողոտաներուն վրայ»¹³: Դիպուկ է ասված աշխատանքի զգացողության շարունակականության մասին:

⁹ Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Եր., 1967, «Հայաստան», էջ 332:

¹⁰ Նույն տեղում, էջ 335:

¹¹ Դանիելյան Ս., Սփյուռքահայ վեպը, Գիրք Ա. / Ժանրը, ամսնորոշները, պատմութեան փիլիսոփայութիւնը, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1992, էջ 192:

¹² Համաստեղ, Մոռացված էջեր, Հատոր Դ., Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 152:

¹³ Հաճեան Պ., Ճանապարհ դէպի Կարկենիշ, էջ 148:

Վ. Հայկի և Պ. Հաճյանի զուգահեռի պարագային կարելի է հաստատել, որ Կարկեմիշը նույնպիսի «հայրենի ծխան» է, ինչպես ամերիկահայ գրողի ստեղծագործական առանցքը կազմած հինգ հատորները՝ նույնահանգ խորագրով: Այստեղ երկուսին միավորողը հեքիաթի արթուն և ժողովրդին արթուն պահող պատկերներն են: Ընդհանրական են գծերը երկու արվեստագետների մոտ, միայն մեկ էական տարբերությամբ՝ Վ. Հայկը բերում է հեռվում մնացած գավառը՝ իբրև հեքիաթ, իսկ Պ. Հաճյանը կառուցում է նոր հեքիաթ՝ նոր միջավայրով, նոր աշխարհով, հոգ չէ, որ դա բնաշխարհը չէ:

Հայկ-Հաճյան համադրական զուգահեռը երևան է գալիս նաև պատկերային կառույցում: Ուշադրություն դարձնենք՝ Վ. Հայկի մոտ անցյալին կապող միակ հուշը պատից կախված Հայկ Նահապետի ոսկեգօծ շրջանակով նկարն է, ազգային ուժի առասպելական խորհրդանիշը («Օր մը Հայկ Նահապետին մօտ»), իսկ Պ. Հաճյանի մոտ առաջին գծի վրա գալիս է իրական օրերի իրական հերոսը՝ առասպելական Անդրանիկ Փաշան («Անդրանիկ Փաշա Հայաստան գնաց»):

Ամերիկյան միջավայրից Բենիամին Նուրիկյանը նույնպես ուրվագծում էր անցյալը՝ կարոտի կրակը բորբոք պահելով, ինչ-որ տեղ վերադարձի պարապ հույսով: Նուրիկյան-Հաճյան կառուցողական ընդհանրություններից նշենք բնապատկերային նախասիրությունը, երբ արևը, մրգերը, շողերը խառնվում էին կերպարներին, մի դեպքում գյուղական նկարագիրն անխաթար պահած կանանց, մյուս դեպքում՝ աշակերտուհիներին: Բ. Նուրիկյանը սովորել է Թլկատինցուց, Պ. Հաճյանը կարող է հայտարարել, որ իր ավագ ուսուցիչների շարքում նաև Բ. Նուրիկյանն է՝ հենց պատկերային կառուցողական շնորհով:

Ամերիկահայ մեկ այլ արձակագրի՝ Հակոբ Ասատուրյանի հետ ներքին աղերսներից Պ. Հաճյանի համադրական օրինակներից մեկը թերևս հուշում է Արևելքը տեսնելու, ավելի շատ վերապրելու, յուրացնելու և մատուցելու հարցադրումը և պատասխանի անդուլ որոնումը, ճիշտ այնպես, ինչպես ամերիկահայ արձակագիրը Չոմախյուն հետահայաց նկարագրելիս: Ի դեպ, ընդհանրական է հեղինակների մոտ նաև միջավայրի ընտրության մեջ արաբական գործոնի կիրառությունը: Վերագտնումի ճիգը Հ. Ասատուրյանին տանում է դեպի արաբական Պոսեյրա գյուղ, ուր, սակայն, հեղինակը մշտական կեցություն չէ, որ որոնում է իր հայ հերոսի ու հերոսների համար, այլ սարսափի, մթազնա պատկերի սաստկացումը: Մինչդեռ Պ. Հաճյանի մոտ գյուղը, թեկուզ արաբական, կեցության մշտական ձև է հյուրընկալ ժողովրդի անմիջական հարևանությամբ:

Հետաքրքիր զուգահեռներ է պարզում նաև Հ. Մնձուրու և Պ. Հաճյանի ստեղծագործական քննությունը: Պոլսահայ գրողն ընդգծում է՝ «Մեր տեղահանութենն առաջ իմ գիտցածներս են, որ կպատմեն: Անկե հետո՝ ով

մնաց, ով ինչ եղավ՝ չեմ գիտեր»¹⁴: Իսկ Պ. Հաճյանի և Նրա սերնդակիցների գրականությունը «անկե հետոյի» աշխարհն է, որը ըստ էության՝ տալիս է Հ. Մնձուրու հարցադրման պատասխանը: Գրականագիտության մեջ նկատվել է նրա ճանապարհի բարեբար ներգործությունը Պ. Հաճյանի վրա, որ հետամուտ է իր միջավայրի հերոսների հոգեհարազատ ճշգրիտ մատուցման սկզբունքին:

Տեսաբանական մեկ-երկու հարցադրումներով մենք կարող ենք նաև ի ցույց դնել Վ. Շուշանյանի և Պ. Հաճյանի գեղարվեստական նկարագրի արմատական տարբերիչ և միաժամանակ միավորիչ սկզբունքները: «Երկիր յիշատակաց» պոեմում, որը լույս տեսավ գրելուց միայն գրեթե քառասուն տարի անց Երևանում, Վ. Շուշանյանը բերում է ծննդավայր Ռոդոսյոն գյուղաքաղաքի բարձր, որից մեկընդմիջտ հեռացել է կենսագիր հեղինակը: Մինչդեռ Կարկեմիշը, որտեղ Պ. Հաճյանի մանկությունն ու պատանեկությունն է բացված հետահայաց պլանով, ներկայացնում է ներկան: Եվ սա արդեն բերում է հայացքների սուր, ինչ-որ տեղ հակադրական վերաբերմունք:

Ինքնակենսագրական հուշապատումին ավելի ուշ վերադառնում է բանաստեղծական ժողովածուներով իրեն հաստատած Մուշեղ Իշխանը՝ ելնելով «մի՞թե լաւագոյն պատմութիւնը, դուք ըսէ՞ք՝ վէպը իւրաքանչիւր անձի կեանքը չէ արդէն»¹⁵ սկզբունքից: Նա և Անդրանիկ Ծառուկյանը կարծես սովորեցնում են Պ. Հաճյանին վավերական կենսապատումի գեղարվեստական նախահիմքերին հավատարմության գաղտնիքները: Այս երկու գրողների հոգեբանության ընդհանուր ուրվագծերը մանկության տրտմության ելագծերով անցնում են ոչ միայն «Կարկեմիշ»-ին, այլև Պ. Հաճյանի ստեղծագործական ողջ ներկայանակին: Դիպուկ օրինակը հատկապես տեսնում ենք Ա. Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ» վիպակի և Պ. Հաճյանի «Ճակատագիր» պատմվածքի բնագրերում որբանոցի «Հայրիկի» ընդհանրական կերպարով:

Հաստատենք, որ համեմատաբար ավագ սերնդի գրչափորձը, ինչպես տեսնում ենք, զգալիորեն նախապատրաստեց Պ. Հաճյանի գրական հայացքի, ռճավորման յուրահատկությունների կազմավորման ընթացքը: Մեր կարծիքով, նա այս առումով սփյուռքահայ նոր սերնդի գրողներից միակն է, ով ժառանգում է ոչ միայն թեման, այլև բերում է մատուցման նոր ու անակնկալ եղանակներ՝ բոլորովին էլ չկրկնելով իր ավագների գեղարվեստական ինքնատիպությունը:

Պ. Հաճյանն արևելյան գյուղաքաղաքի ասացողն է, տարեգիրը, կենդանագիրն ու կենցաղագիրը: Նրա՝ կենսագրական շաղախով թրծված գեղարվեստական տարեգրությունը՝ «Կարկեմիշ» վիպակը, սփյուռքահայ արդի

¹⁴ Մնձուրի Հ., Երկեր, Եր., «Սովետական գրող», էջ 366:

¹⁵ Իշխան Մ., Մնաս բարով, մանկութիւն, Պէյրուօ, «Համագգային»-ի հրատ., 1974, էջ 6:

արծակի մնայուն արժեքներից է, հեղինակի ստեղծագործական հաղթանակը, ինչի քննությանն էլ նվիրված է այս գլխի երկրորդ ենթաբաժինը: Չնայած ծավալի առումով այն ավելի մնում է վիպակի տիրույթներում, այնուամենայնիվ, Պ. Հաճյանը գիրքը ենթախորագրել է «վէպ»: Նրա վիպակը փորձառություն ունեցող, կենսընթացի մեծագույն մասն անցած մարդու մտորումների արգասիքն է, մանկության վերհուշը, շրջապատն ու մարդկանց կերպարները՝ պահված հիշողության տեսադաշտում, ուրիշ խոսքով՝ կյանքն ապրած մարդու վերաքննություն-հաշվեհարդարը: Բնութագրական է ինքնակենսագրական պատումի մեկ այլ վարպետի՝ Գ. Մահարու մոտեցումն այս պարագայում. «Գրական երկի հաջողության առաջին պայմանն է, որ տվյալ նյութը ոչ միայն քաջածանոթ լինի գրողին, այլև **ապրված** (ընդգծումը հեղինակինն է-Ն.Գ.): Առանց այս նախապայմանի անխուսափելի է պարտությունը...»¹⁶:

Գիրքը բացվում է Արևելքը պատկերող անզուգական վրձնահարվածներով, Արևելք, «ուրկէ ամէն առաւօտ արեւը՝ կարմիր ու կլորակ, երկիր կը ժամանէ քունէն նոր արթնցողի դանդաղկոտութեամբ»¹⁷: Ապա երևակայության զորությամբ ուրվագծվում են պարտիզայան Պետրոսի նշենիներն ու ծիրանենիները, Օհաննեսի հաստաբուն թթենիներն ու նրանց ետևում սփռված ցորենի արտերը, արծաթափայլ գետն ու հորիզոնում երևացող բլուրների շուրջապարը, Կարկեմիշի աղբյուրը, որն իր միալար խշշոցով կենդանություն էր տալիս գյուղաքաղաքին:

Պ. Հաճյանի հերոսը՝ նույն ինքը հեղինակը, դրվում է դեպքերի շարժման խորքում, և հարյուրավոր հերոսների շղթայի մեջ զարգանում է նաև նրա կերպարը: Այստեղ է, որ իրականությունն ու բարձր արվեստը խաչադրվում են՝ ստեղծելով ինքնատիպ ստեղծագործական մի կառույց: Արևելքն ապրում էր Պ. Հաճյանի մեջ, նրա արյան բաղադրությունն էր, ահա թե ինչու «արգենտինահայ» բնորոշման հետ այդքան անհաշտ էր արձակագիրը, չնայած կյանքի զգալի հատվածն ապրել է Բուենոս Այրեսում, որտեղ էլ կյանքի են կոչվել նրա գրական-ստեղծագործական մնայուն արժեքները:

Վեպն ունի բազմաճյուղ ընդգրկում: Հերոսների և սյուժետային դեպքերի շրջանակը հետզհետե ընդլայնվում է. ընթերցողի տեսադաշտում կանգնում է Կարկեմիշի և կարկեմիշցու ամբողջական կերպարը, որտեղ ինքը մշտապես կենտրոնում է՝ մե՛րթ որպես դեպքերի ակնաստես ու վկա, մե՛րթ իրադարձությունների շղթայի մի օղակ: «Ես նստած կ'ըլլամ մեր կապտորակ պատուհանին առջե»¹⁸, - գրում է արձակագիրը՝ շեշտելով իր ներկայությունը:

Տարիների հեռավորությունից, մտովի ճեղքելով Արգենտինան Կարկեմիշից բաժանող հսկայական տարածությունը, հեղինակը վերադառնում է

¹⁶ Մահարի Գ., Այրվող այգեստաններ, Երևան, «Ապոլոն», 2004, էջ 556-557:

¹⁷ Հաճյան Պ., Ճանապարհ դէպի Կարկեմիշ, էջ 146:

¹⁸ Նույն տեղում, էջ 148:

գյուղաքաղաք, դեպի Արևելք՝ «աշխարհի այն կողմը, զոր կորսնցուցած են տարիներէ ի վեր ու չեն գտած ո՛չ Պուէնոս Այրէսի մէջ եւ ո՛չ ալ որեւէ մեծ քաղաքի մարդակույ պողոտաներուն վրայ»¹⁹, և ընթերցողին խորհրդավոր մի ուղևորության տանում:

Եվ քայլ առ քայլ գծագրվում է հին Ճարապուսի նոր քարտեզը, իսկ այս պարագայում գյուղաքաղաքն արդեն փոքրիկ Հայաստան է, հայ միջավայր՝ հերոսներով, իրարից տարբեր ճակատագրերով ու պատումներով, հիշողությամբ, որը անցյալի հետ կապող հուսալի կամուրջ է:

Օգտվելով Սիլվա Կապուտիկյանի ծրագրային բառաշերտի զինանոցից՝ շեշտենք, որ վեպն ընթերցվում է մեկ շնչով, որովհետև այն արձակագրի «հոգու քարտեզի գույներից» է ծնվել. կան մարդկային ճակատագրեր, կա հերոսների հոգեբանական շարժում, հայացքի խորատես քննություն: Հույզի երանգավորումը, ոճի պարզությունը, գեղագիտական ուշագրավ մատուցումը Պ. Հաճյանի վիպակը դարձնում են տեսանելի սփյուռքահայ նորոյս գրականության մեջ: Այն թողնում է առանձին կենսագրական պատումներից (զինեպան կամ կավածատեր Քիրիաքոս, դեղագործ Մինաս, Տիգրան Չավուշ, Արշակ թագավոր և ուրիշներ) ածանցվող սյուժետային ճյուղավորումների շղթայի տպավորություն:

Նրա բոլոր կերպարները ստուգապես ապրած, ծննդավայր ու ճշգրիտ հասցեներ ունեցող մարդիկ են: Երկու հարյուրի սահմանն անցնող հերոսների տողանցքը կերպարների պատկերասրահի տպավորություն է թողնում, նրանց կենցաղավարության ու նախասիրությունների նկարագրությունը, գյուղաքաղաքի առօրյալի վերհանումը թույլ են տալիս ասելու, որ գործ ունենք վեպ-համայնապատկերի հետ: Այն գյուղաքաղաքի բնակչության խմբանկարն է, որը «լինելուօրեան ընթացքի» պես ամբողջանում է կերպարներով, իրական դիմագծերով, բնավորությունների խայտաբղետությամբ, նրանք, ովքեր «յամառօրէն կը յաճախեն յիշողութեանս, ամէն անգամ որ մտնեմ Կարկենիշի մշուշներուն մէջ»²⁰: Նկատենք, որ ոչ հեռավոր անցյալի հիշատակների հետ այսպես է վարվում նաև լիբանանահայ արձակագիր Արմեն Դարյանը, որն իր «Խարիսխսն հեռու» գրքի պատումները ենթախորագրել է «Լուսանկար մէկ, երկու...», ինչը փաստում է, որ նկարագրվող պատկերները, գործող կերպարները միայն գրողի երևակայության արդյունք չեն, այլ վավերական են ու շոշափելի:

Պ. Հաճյանի հերոսներն ինքնօրինակ հոգեկերտվածքի տեր են, ապրումների իրենց անկրկնելի աշխարհի գունավորումներն ունեն: Նուրբ վրձնահարվածներով կերպավորվում են գլուխ գլխի եկած հայերը՝ կարնեցի, տիգրանակերտցի, սասունցի, մարաշցի, կեսարացի, ասել է թե՛ «Էրգրի»

¹⁹ **Նույն տեղում:**

²⁰ **Նույն տեղում**, էջ 209:

մարդիկ՝ իրենց կենցաղով, բարբառով, պապերից ժառանգած նիստուկացով, հիշողությամբ:

Գրողի խոսքում գերիշխողը պարզությունն է, միևնույն ժամանակ բազմաշերտությունը՝ մաքուր արևմտահայերենից մինչև բարբառախոսություն և, ինչու չէ, անգամ՝ արաբերեն հայիոյախոսություն: Երբեմն կենցաղային նկարագրությունների մեջ, կանանց «միթինգները» հիշելով, հեղինակը զգուշավոր փափկությամբ նկատում է. «չեմ կրնար արտաբերել հոս՝ վախճալով այս գիրքը կարդացողներու սրդողանքէն»²¹:

Նկատենք նաև, որ Պ. Հաճյանը ընդհանրապես մեկ դիպուկ բառով կամ մեկ տողով, նորից ապավինելով երգիծախառն խոսքի սլացքին, կարողանում է կենդանի նորանոր երանգներ հաղորդել կերպարին՝ արտաքինի նկարագրության հետ երևան հանելով նաև բնավորության գծեր (Կոշկակար Մինաս, Սրճեփ Ավտիս, Պոյաճի Սարգիս և ուրիշներ):

Վերադառնալով վիպական կառուցվածքի խնդիրներին, ընդգծենք, որ այն համադրական է, բազմաճյուղ, ներկայացվում է ժամանակային երկու գոտիների համամասնությամբ՝ ներկա-անցյալ և նորից ներկա: Ներկան վերակազմված է Բուենոս Այրեսում, բայց ամբողջությամբ տիրականը «անցյալն» է, որը հեղինակին տրվում է հարաբերական ներկայի գերակայությամբ: Խաբուսիկ թվալ չի կարող ժամանակային այս հմտալի խաղը, երբ ներկան դառնում է երեկվա անցյալը՝ Ճարապուսը, որի մշուշներում թաղված է հեղինակի «ոսկեթել» մանկությունը: Կա նաև երրորդ միջավայրը՝ կորսված հայրենիքը, որը, սակայն, շեշտվում է միայն հերոսների խոսքում, միայն որպես ցավալիորեն ավարտուն, անդառնալի անցյալ, ինչից ապրած մորմոքը վերապրեցնում է նաև սերնդակիցներին:

Վիպական գործողություններն ընթանում են ոճական առանձին շերտերով՝ մե՛րթ էպիկական վերհուշի, մե՛րթ զվարթ-երգիծական կամ էլ խորքի մեջ ողբերգական խաղարկումներով, որոնք հեղինակի ասելիքը ներհյուսում և ստեղծում են պատումի շաղկապված, հախտուն, բայց միասնական ընթացք: Տեղին է այստեղ մեջբերել գրականության տեսաբան Զավեն Ավետիսյանի ընդհանրական նկատառումը, թե «այսօրվա բարձրարվեստ արձակը խուսափում է միագիծ նկարագրականությունից, գնում է դեպի իրավիճակային հոգեբանությունը, դեպի հերոսների բազմաճյուղ ընկալումների ու արձագանքումների աշխարհը»²²: Դա չի վերաբերում միայն հայրենի հետահայաց գեղարվեստական օրինակներին, այլ օրինաչափություն է, որտեղ Սփյուռքի գրականությունը ևս իր ներկայությունն ունի:

²¹ Նույն տեղում, էջ 208:

²² Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 66:

Պ. Հաճյանի արձակի ուժը նախևառաջ ապրված կյանքի բազմակողմանի ու խոր արտացոլման մեջ է:

Պ. Հաճյանի վեպում շարդերի նկարագրությունները չկան, որոնք այնքան մանրամասնություններով բացվում են այլ ստեղծագործություններում, բայց անտուն, անօգնական որբերի, ճակատագրով դատապարտված ընտանիքների մասին մեկ-երկու զուսպ նախադասությունները դարձյալ արթնացնում են հիշողությունը:

Վեպում առանձին քննության նյութ է դառնում ազգային ինքնության կորստյան տագնապը, որը Սփյուռքի առաջին շրջանից ի վեր առայսօր շարունակվող ցավոտ բովանդակություն ունի:

Շրջանառվող մտահոգությունների մեջ առանձնակի դերակատարություն ունի ներգաղթի թեման, որին հեղինակը անդրադարձել է նաև առանձին պատմվածքներում: Ներգաղթի հանգրվան Հայաստանը հույսով ու ակնկալությամբ ապրող կարկեմիշցուն հեռվում ներկայանում էր իբրև շողարձակող փարոս, նամանավանդ այն ընտանիքների պարագայում, ովքեր անհաշտ էին արաբական միջավայրից բխող բարբերին: Ներգաղթը դարձավ «հմայիչ բառ մը», սպասումների անսպառ շղթա՝ ձգվելով դեպի նվիրական ավունք, դեպի հայրենիք: Հայրենադարձություն, ասել է թե հայրենիքը վերագտնելու նոր հույս: Շատերի պես սրճեփ Ավտիսի ընտանիքին էլ չհաջողվեց հայրենիք վերադառնալ, եղած փոքրիկ հույսը նույն արագությամբ էլ մարեց: Եվ փրկության ու հարատևության միակ խարիսխը շարունակեց մնալ Կարկեմիշը:

Եթե ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ Պ. Հաճյանի «Կարկեմիշ»-ը դասվում է այն երկերի շարքում, որոնք անվերապահորեն մնալու են ոչ միայն Սփյուռքի, այլ առհասարակ հայ գրականության արժեքային հաշվեկշռում:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պետրոս Հաճյանի կյանքը և գործը» ատենախոսությունը գրելիս եկել ենք հետևյալ եզրահանգումների.

1. Սփյուռքահայ գրականության արդի փուլը, նրա մեջ նաև Պ. Հաճյանի գրականությունը, մի մասով արձագանքում է Սփյուռքի ձևավորման արշալույսին առաջ եկած Կարոտի գրականությանը, թեև գտարյուն «Կարոտ» այստեղ դժվար է տեսնել: Այդ գրականության մեջ հաճախ ներխուժում է առօրյայի ու նրա բերած տագնապների քննությունը, որը ավելի շուտ բերում հանգեցնում է Նահանջի գրականության հատկանիշներին, ինչը, սակայն, այս դեպքում օրինաչափություն չի դառնում: Այն միաժամանակ ներկայանում է նաև նոր ժամանակի բերած խնդիրներով ու հարցադրումներով, բերում կառուցվածքային և ոճական նորարար մոտեցումներ:

2. Ապրելով և ստեղծագործելով երկու միջավայրերում՝ Մերձավոր Արևելքում և հեռավոր Արգենտինայում, այնուամենայնիվ, Պ. Հաճյանի հայացքը շարունակաբար ուղղված է մնում դեպի առաջինը՝ պատմական հայրենիքի հարևանությամբ ապրող իր մանկության օրրանը՝ հին Ճարապուլսը, որի հանդեպ կարոտը շարունակ պարտադրում է հեղինակին գրչի ուժով որպես ուխտավոր վերադառնալ ազգային անխաթար հիշատակներին՝ երբեմն փորձելով Կարոտի հայտնի երգիչների հանգույն սրբագրել դրանք:

3. Արձակ ստեղծագործությունների որակական քանակով Պ. Հաճյանը այլևս և մեկընդմիջտ կանգնում է դասական դարձած ռոմանտիկ հեղինակների՝ Կարոտի երգիչներ Համաստեղի, Հ. Մնձուրու, Ա. Ծառուկյանի, Վ. Հայկի, Ա. Հայկազի, Բ. Նուրիկյանի և այլոց կողքին, բայց միևնույն ժամանակ ներկայանում նոր ու ինքնօրինակ ներկայանակով: Պ. Հաճյանի գեղարվեստական առաջադրությունը կապված է հայրենիք կորցրած մարդու ազգային հիշատակների փրկության զգացողության հետ: Եվ սա է թերևս պատճառը, որ հեղինակը դիմում է այս առումով ամենից «հարմար» թվացող՝ գեղարվեստական տարեգրության ժանրին՝ որպես գրական մնայուն ժառանգություն ժամանակին պահ տալով «Հրամմեցե՛ք, պարոններ», «Կար ու չկար» պատումնաշարերը և «Կարկեմիշ» կենսագրավեպը, որտեղ և՛ եղեռն ապրած մարդու կորուստների ցավն է, և՛ վերագտնումի հոգեբանական ճիգը, և՛ Հայաստան ներգաղթելու հույսի շողարձակումն ու հիասթափությունը:

4. Վերլուծության ենթարկելով հեղինակի գեղարվեստական ժառանգությունը՝ նկատել ենք, որ թե՛ պատմվածքներում, թե՛ վեպում նրա գրիչը միասնական է: Օրինաչափ են թվում թեմատիկ ընդհանրություններն ու հարցադրումները, որոնք երևան են գալիս ժանրային բազմազանության մեջ, պատմվածքներում, վիպակներում: Հիրավի, հատկանշական է ծննդավայր Ճարապուլսի, ասել է թե՛ հինավուրց, մետաքսի ճանապահին ընկած Կարկեմիշի հավաքական դիմագծի վերակերտումը:

5. Պատահական չպետք է համարել նաև այն, որ առանձին հերոսներ, գործողությունների առանձին դրվագներ պատմվածքներից հաճախ, այլ սյուժետային զարգացումներով, թափանցում են վիպական տիրույթ՝ նույն անունով, նույն նկարագրով ու վարքագծով և, որ կարևորն է՝ նույն հոգեբանական խառնվածքով: Սա հեղինակային յուրատեսակ նախասիրություն է, և նկատենք, որ նման թվացյալ «կրկնությունների» ժամանակ ընթերցողի ուշադրությունը չի նվազում, եթե չասենք ավելին՝ ամբողջանում է պատկերի ու կերպարի ընկալման ճանապարհին: Ընդգծենք նախորդ դատողությունից բխող մեկ այլ հանգամանք. Թերևս սա է պատճառը, որ վեպում կյանքից վերցված որոշ իրապատում, վավերական դրվագներ ինքնուրույն պատմությունների կարգով հեշտությամբ կարող են առանձին պատմվածքի նյութ դառնալ:

6. Քնարական պարբերական անցումներով արձակագիրը կերտում է Ճարապուստի առօրյան, այդ թվում՝ իր ընտանիքի՝ Սրճեփ Ավտիսի գերդաստանի պատմությունը: Երկշերտ Կարոտ կա այս էջերում. մի դեպքում Ճարապուստում հանգրվան գտած հայի մորմոքն է կորցրած հայրենի եզերքի նկատմամբ, մյուս պարագայում՝ հեղինակի կարոտը՝ հեռվում թողնված Ճարապուստի՝ մանկության օրրանի հանդեպ:

7. Պ. Հաճյանը գեղարվեստական գրականության կալված, ճիշտ է, ուշ է մուտք գործել (պատճառը կուսակցական, հրապարակային և մանկավարժական մաշող աշխատանքն էր), բայց նրա «Հրամմեցե՛ք, պարոններ», «Կար ու չկար» պատմվածաշարերը և «Կարկեմիշ» վիպակը անվերապահորեն մնալու են իբրև նորագույն շրջանի հայ գրականության պատմության նկատելի դրվագներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. «Կորստի մորմոք, նահանջ, ներգաղթելու հույս եզրույթները Պետրոս Հաճյանի «Հրամմեցե՛ք, պարոններ» պատմվածաշարում», ԱրՊՀ-ի «Գիտական տեղեկագիր», թիվ 2 (28), 2013, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2013, էջ 242-251:

2. «Պետրոս Հաճյան. դիմագիծ և հատկանիշներ», ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» / գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատ., 2015, էջ 267-274:

3. «Ծննդավայրի պատկերման գործոնը Պետրոս Հաճյանի «Կարկեմիշ» վեպում», ԼՂՀ Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» / գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատ., 2014, էջ 262-269:

4. «Տարեգրության ժանրը սփյուռքահայ գրականության մեջ», ԱրՊՀ-ի «Հայագիտական ուսումնասիրություններ» / գիտական հոդվածների պարբերական ժողովածու, 6/2015, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2015, էջ 324-333:

5. «Ինքնակենսագրության ժանրի արձարձումները սփյուռքահայ գրականության մեջ», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», թիվ 3 (37), Երևան, «Արման Ամանգույան» տպ., 2017, էջ 42-51:

6. «Արգենտինահայ երիտասարդ սերնդի հայապահպան որոնումները «Կար ու չկար» պատմվածքների ժողովածուում», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», թիվ 4 (38), Երևան, «Արման Ամանգույան» տպ., 2017, էջ 127-131:

7. «Ներգաղթի բարոյաբանությունը Պետրոս Հաճյանի ստեղծագործություններում», «Կանթեղ» /գիտական հոդվածների ժողովածու,

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, թիվ 1, Երևան, «Ատոլիկ» հրատ., 2018, էջ 11-15:

ДАВИДЯН НОНА РАФИКОВНА

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО ПЕТРОСА АДЖЯНА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 “Армянская литература новейшего периода”

Защита состоится 30–го марта 2018 года в 14:00 часов на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Литературоведение» при Институте литературы им. М. Абеяна по адресу: ул. Г. Лусаворича, 15, Ереван.

Предметом исследования диссертации является жизнь и творчество Петроса Аджяна. Целью нашей работы является представление особенностей прозы П. Аджяна в художественном контексте тоски, а также место и значимость этого писателя в жанре литературной хроники. Задачей исследования является представление целостного образа Петроса Аджяна – прозаика и публициста, его борьбы за сохранение самобытности аргентинских армян, шаг за шагом отдаляющихся от национальных истоков, а также его усилий в деле укрепления связей Родина – Диаспора.

Диссертация состоит из введения, трех глав, заключений и списка использованной литературы.

В введении рассматривается история вопроса, а также делается попытка в общих чертах представить пути развития литературы Диаспоры.

Первая глава называется «На скрещении биографических дорог писателя, учителя и редактора». В данной главе мы попытались рассмотреть личность писателя в различных условиях: сначала Чаралпус и Аллепо, затем Аргентина, Буэнос-Айрес. Была затронута его общественная, политическая, редакторская, а также педагогическая деятельность. С учетом принципов отечественного литературоведческого опыта и опыта литературы Диаспоры, в данной главе показана роль Аджяна-писателя в рамках динамики мотива тоски.

Вторая глава носит название «Малая проза Бедроса Аджяна». Она состоит из двух подглав: «Цикл рассказов «Добро пожаловать, господа!», как первая попытка художественной летописи, и «Новые границы творческих поисков: «Было и не было»».

Была предпринята попытка дать также общую характеристику творчества писателя, и, в частности, детально исследовать его сборники рассказов «Добро пожаловать, господа!» (1995) и «Было и не было» (2003).

Третья глава носит название «Жанровое достижение художественной летописи».

Данная глава также состоит из двух подглав: «Бедрос Аджян и автобиографический жанр летописи – на историко-литературных параллелях» и «Наивысший фактор родины в повести «Каркемиш».

Поскольку литература П.Аджяна находится в тесной взаимосвязи с предыдущими произведениями данного жанра, в данной подглаве мы постарались наиболее подробно представить схему развития жанра и представить панораму народной жизни Чараплуса в контексте произведений П.Аджяна - в циклах его рассказов и отдельных отрывках из размышлений.

Именно здесь со всей очевидностью проявился вопрос соотносительности Литературы тоски и П.Аджяна. Мы выявили полное соответствие особенностей его творчества принципам данного литературного направления, те характерные признаки, которые отмечают писателя уже в новейший период литературы Диаспоры. Подчеркивается то обстоятельство, что в произведениях П.Аджяна сквозь призму настоящего вырисовывается прошлое, проступают, становясь целостными, запечатлевшиеся на полотне памяти образы, предстывая перед читателем почти с фотографической точностью, и рядом с этими образами и вместе с ними разрастается и биография автора.

О Педросе Аджяне, как о прозаике, публицисте и педагоге в прессе с разными оценками выступали такие представители армянской Диаспоры, как прозаик и редактор Ропер Аттечян (Константинополь), Акоп Кюллучян (США), культурно-просветительский деятель Акоп Латосян (Ливан), прозаик, литературовед Норайр Адалян, литературовед Сурен Даниелян, и другие. В значительной степени к исследованию творческих страниц П. Аджяна обращается литературный критик из Алеппо Левон Шароян в своей книге «Буэнос-Айрес, улица Армения».

Упоминание названных источников уже указывает на достаточную разработанность темы; таким образом, можно говорить о том, что диссертация является попыткой заполнить пробелы, а также систематизировать литературное наследие прозаика.

Благодаря своим прозаическим произведениям П.Аджян занимает свое место в одном ряду со ставшими классиками романтизма, представителями Литературы тоски Амастехом, А.Мндзури А.Царукяном, В.Айком, А.Айказом, П.Нуриакяном, и в то же время обладает новой и самобытной художественной палитрой.

Творческие предпосылки П.Аджяна основаны на чувстве сохранения национальной памяти человека, потерявшего родину. Именно по этой причине автор обращается к самому в данном контексте актуальному жанру – жанру художественной хроники и на заключительном этапе жизни представляет на суд читателя автобиографическую повесть «Каркемиш».

Была предпринята попытка детально описать путь развития жанра художественной хроники и особо выделить в нем роль П. Аджяна.

Подвергая анализу художественное наследие автора, мы заметили, что и в рассказах и в романе «Каркемиш» его творческий почерк неизменен. Закономерными кажутся тематика и проблематика произведений различных жанров писателя. Необходимо отметить, что П.Аджян был одним из первых, кто в литературе наряду с темой тоски затронул тему репатриации, не обойдя и трагические стороны этого явления.

Подводя итоги, можно отметить, что художественное наследие П.Аджяна безусловно сохранится не только в нише литературы диаспоры, но и в армянской литературе в целом. Пройденный им жизненный путь может послужить образцом жизни и деятельности настоящего армянского интеллигента. Бедрос Аджян является мудрым наставником поколений, стоящим на страже сохранения национальной памяти.

Nona R. Davidyan

Bedros Hajan's Life and Work

**The dissertation for the scientific degree of candidate of philological Sciences,
specialty of 10. 01.02 «Armenian Literature of Modern Period»**

**The defense will be held on March 30, 2018 at 14:00 o'clock at the meeting of the
Specialized Council of Literary Studies 003, at the Institute of Literature after M.
Abeghyan, NAS RA.**

Address: G.Lusavorich Str. 15, Yerevan.

The research subject of the dissertation is the life and work of Bedros Hajyan. The aim of our work is to present the features of B.Hajyan's prose in the literary context of longing as well as the place and the importance of this writer in the literary genre of Chronicles. The objective of the study is to present a holistic image of B.Hajyan – novelist and essayist, his struggle for the preservation of the identity of the Argentine Armenians, who step by step became estranged from national sources, as well as his efforts in strengthening of Armenia – Diaspora relations.

The dissertation consists of introduction, three chapters, conclusions and the list of references.

The Introduction describes the history of the issue, and attempts to broadly represent the development of the Diaspora literature.

The first Chapter is called "At the crossing of biographical roads of writer, teacher and editor". Here an attempt was made to examine the writer's personality in various settings: first, Charaplus and Aleppo, then Argentina, Buenos Aires. His social, political, editorial, and teaching activities were examined. In this Chapter, taking into consideration the experience of native literature and the literature of the Diaspora, the role of Hajyan-writer is presented within the dynamics of the motive of longing.

The second Chapter is entitled «Small Prose of Bedros Hajyan». It consists of two subchapters "Cycle of stories, "Welcome, Lords!" by Bedros Hajyan" and "New frontiers of creative research: "It was and was not".

An attempt was made to give the general characteristic of the writer, and, in particular, to study in detail his collections of short stories, "Welcome, Lords!" (1995) and "It was and was not" (2003).

The third Chapter is called "The Genre Achievement of Art Chronicle". This Chapter also consists of two subchapters: "The Autobiographical Genre of the Chronicle and Bedros Hajyan: Historical and Literary Parallels" and "The Paramount Factor of Homeland in the "Karkemish" novel".

Taking into consideration the fact that Hajyan's literature is in close relationship with the previous works of the genre, we have tried to present the most detailed scheme of the development of the genre and to present a panorama of the national life of Charaplus in the context of works by B.Hajyan, namely in the cycles of his stories and certain passages of reflections.

The third Chapter is called "the Motif of the Motherland as the Dominant Motif in the story "Carqemish" by B.Hajyan. It is this chapter that clearly shows the correspondence between the Literature of longing and B. Hajyan. We have identified full compliance of the peculiarities of his work with the principles of this literary direction, those characteristic features, which mark the writer in the modern period the literature of the Diaspora. The fact is emphasized that in the works of B. Hajyan the past emerges through the prism of the present, the images exude, becoming an integral, imprinted on the canvas of memory, submitting to the reader with almost photographic precision, and next to these images and with them grows and biography of the author.

Of Bedros Hajyan, as of novelist, publicist and teacher, different estimations were given by such representatives of the Armenian Diaspora as a writer and editor Roper Attechyan (Constantinople), Tigran Kyulluchan (USA), cultural-educational actor Hakob Latoyan (Lebanon), writer, literary critic Norayr Adalyan, literary critic Suren Danielyan and others. Largely to the study of creative pages of B. Hajyan turns the literary critic from Aleppo, Levon Sharoyan in his book "the Buenos Aires, street of Armenia".

The reference to the sources named already demonstrates the appropriate examination of the topic; thus, it is possible to say that the dissertation is an attempt to fill gaps and systematize the literary heritage of the writer.

According to his prose samples B. Hajyan takes his place among the classics of romanticism, representatives of the Literature of longing such as Amastegh, A. Mndzuri, A. Tsarukyan, V. Hayk, A. Haykaz, B. Nurikyan, and has a new and original artistic palette at the same time.

The creative background of B. Hajyan is based on the sense of preservation of the national memory of a man who has lost his homeland. For this reason, the author turns to the most relevant genre - the genre of literary chronicles and at the final stage of life presents to the reader an autobiographical novel "Carqemish".

An attempt was made to describe in detail the way of development of the literary chronicles genre and to highlight the role of B. Hajyan in it.

Inspecting the literary inheritance the author, we noticed that his literary style in stories and in the novel "Carqemish" remained unchanged. Quite natural seem to be the thematic range and the range of issues of writer's works of various genres. It should be noted that B. Hajyan was one of the first in the literature who along with the theme of longing touched upon the topic of repatriation, not beating and the tragic side of this phenomenon.

Summing up, it can be noted that the artistic legacy of B. Hajyan will certainly persist not only in the niche of the literature of the Diaspora, but also in Armenian literature as a whole. His traversed life's path can serve as a sample of the life and work of a true Armenian intellectual. Bedros Hajyan is a wise mentor for generations, standing guard over the preservation of the national memory.

The third Chapter is called "the Motif of the Motherland as the Dominant Motif in the story "Carqemish" by B.Hajyan. It is this chapter that clearly shows the correspondence between the Literature of longing and B. Hajyan. We have identified full compliance of the peculiarities of his work with the principles of this literary direction, those characteristic features, which mark the writer in the modern period the literature of the Diaspora. The fact is emphasized that in the works of B. Hajyan the past emerges through the prism of the present, the images exude, becoming an integral, imprinted on the canvas

of memory, submitting to the reader with almost photographic precision, and next to these images and with them grows and biography of the author.

Of Bedros Hajyan, as of novelist, publicist and teacher different estimations were given by such representatives of the Armenian Diaspora as a writer and editor Roper Attechyan (Constantinople), Tigran Kyuilluchan (USA), cultural-educational actor Hakob Latoyan (Lebanon), writer, literary critic Norayr Adalyan, literary critic Suren Danielyan and others. Largely to the study of creative pages of B. Hajyan turns the literary critic from Aleppo, Levon Sharoyan in his book "the Buenos Aires, street of Armenia".

The reference to the sources named already demonstrates the appropriate examination of the topic; thus, it is possible to say that the dissertation is an attempt to fill gaps and systematize the literary heritage of the writer.

We came to the conclusion that prose of B. Hajyan takes its place among the classics of romanticism, representatives of the Literature of longing such as Amastegh, A. Mndzuri, A. Tsarukyan, V. Hayk, A. Haykaz, B. Nurikyan, and has a new and original artistic palette at the same time.

The creative background of B. Hajyan is based on the sense of preservation of the national memory of a man who has lost his homeland. For this reason, the author turns to the most relevant genre - the genre of literary chronicles and at the final stage of life presents to the reader a biographical novel "Carqemish".

An attempt was made to describe in detail the way of development of the literary chronicles genre and to highlight the role of B. Hajyan in it.

Inspecting the literary inheritance the author, we noticed that his literary style in stories and in the novel "Carqemish" remained unchanged. Quite natural seem to be the thematic range and the range of issues of writer's works of various genres. It should be noted that B. Hajyan was one of the first in the literature who along with the theme of longing touched upon the topic of repatriation, not beating and the tragic side of this phenomenon.

Summing up, it can be noted that the artistic legacy of B. Hajyan will certainly persist not only in the niche of the literature of the Diaspora, but also in Armenian literature as a whole. His traversed life's path can serve as a sample of the life and work of a true Armenian intellectual. Bedros Hajyan is a wise mentor for generations, standing guard over the preservation of the national memory.